# Պետական կառույցների և ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի

## 2014 թվականի տվյալների

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին: Կազմակերպության առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը: Այս առաքելությանը հասնելու համար կազմակերպությունը գործունեություն է իրականացնում հետևյալ ոլորտներում՝

- մարդու իրավունքների պաշտպանություն
- շահերի պաշտպանություն
- խաղաղասիրություն
- մոնիթորինգ

Սույն փաստաթուղթը նպատակ ունի ներկայացնել, թե ՀՀ պետական կառույցները և ՏԻՄ-երը, որքանով են պահպանում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի[1] և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվեցիայի 10-րդ հոդվածի դրույթները տեղեկությունների տրամադրման ժամանակ:

**Մեթոդիկա**

Նշված նպատակին հասնելու համար, կազմակերպությունը մշակել և փորձարկում է ներքոշարադրյալ մեթոդաբանությունը:

Տեղեկանքի հիմնական տեղեկատվությունը ստացվել է պետական և ՏԻ կառույցներից, որոնց ցանկն ամբողջությամբ ներկայացված է *Հավելված 1-ում*: Այն արտացոլում է նաև տեղեկատվական հարցումների պատասխանների վիճակագրությունն՝ ըստ առանձին կառույցների:

Կազմակերպությունը հավաքագրված տեղեկատվությունը բաժանել է հետևյալ խմբերի՝ *ժամանակին* ստացված պատասխաններ, *ուշացված* պատասխաններ և *չպատասխանված* հարցումներ:

***Ժամանակին*** են համարվում տեղեկատվական հարցումների այն պատասխանները, որոնք կազմակերպությունը ստացել է հարցումն ուղարկելուց հետո 12-օրյա ժամկետում:

Կազմակերպության կողմից 12-օրը որպես ողջամիտ ժամանակահատված է համարվում ելնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի այն դրույթից, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ մնացած 7-օրերը դիտվում են որպես փոստային ծառայության համար նախատեսված ժամանակահատված:

***Ուշացված*** են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:

***Չպատասխանված*** են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել:

Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ գործընթացի արդյունքում. հարցումների պատասխանները ստացվելուն պես մուտքագրվում են ՀՔԱՎ հարցումների էլեկտրոնային բազայում, որտեղ նշվում է հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների առարկան: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ աշխատակազմին և պահպանվում է կազմակերպության կողմից սահմանված

[1] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1390

անվտանգության կանոններին համապատասխան: Բազայի տվյալների հիման վրա տարեկան կտրվածքով կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն:
Միայն 2014թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պետական կառավարման և ՏԻՄ կառույցներին ուղղվել են թվով 265 տեղեկատվական հարցումներ:
Ստորև ներկայացվում է հարցումների պատասխանների վիճակագրությունը՝ ըստ բնագավառների և կառույցների:

**Արդարադատության բնագավառ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 24.5%-ն ուղղված են եղել արդարադատության բնագավառին: Այս բնագավառից ժամանակին ստացված հարցումների պատասխանների տեսակարար կշիռը կազմում է 82%: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 1-ում:




Պատկեր 1

- Ժամանակին- 54
- ուշացված-10
- չպատասխանված-1

**ՀՀ ոստիկանություն և նրա ստորաբաժանումներ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 14,2%-ն հասցեագրվել են ոստիկանության բաժիններ: *ՀՀ ոստիկանության թվով 17 բաժիններ ուղարկվել է 43 տեղեկատվական հարցում, որոնցից 34-ին պատասխանել են ժամանակին, և 9 գրության պատասխանել են ամենաշատը 7 օր ուշացումով: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 2-ում:




Պատկեր 2

- Ժամանակին- 34
- ուշացված-9
- չպատասխանված -0

**Տեղական ինքնակառավարման մարմիններ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 9.4%-ը հասցեագրվել են Տեղական ինքնակառավարման մարմիններին: Տեղեկատվական հարցումները հասցեագրվել են 6 քաղաքապետարանների և երկու գյուղապետարանների: Քաղաքապետարաններին ուղարկված հարցումների թիվը գերազանցում է գյուղապետարաններին հասցեագրված հարցումների թվին: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 3-ում:




Պատկեր 3

- Ժամանակին- 24
- ուշացված-0
- չպատասխանված -1

**Սոցիալական և առողջապահական բնագավառ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 25.2%-ը հասցեագրվել են առողջապահության բնագավառ: Այս բնագավառի տեղեկատվական 67 հարցումներից գրեթե կեսը՝ 30 հարցում, հասցեագրված են եղել հոգենյարդաբանական, հոգեբուժական բժշկական կենտրոններին, որոնց պատասխանների մեծ մասը ստացել ենք ժամանակին:

Սոցիալական և առողջապահական բնագավառի ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 4-ում:




Պատկեր 4

- ժամանակին- 50
- ուշացված-15
- չպատասխանված -2

**Պաշտպանության նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 7.1%-ը (19 տեղեկատվական հարցում) հասցեագրվել են պաշտպանության նախարարությանը: ՊՆ-ն առանձնանում է հարցումների առավել ուշ արձագանքման ցուցանիշով՝ ուշացված պատասխանների թիվը գերակշռում է՝ հասնելով 79%-ի: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 5-ում:




Պատկեր 5

- ժամանակին- 2
- ուշացված-15
- չպատասխանված- 2

**Կրթության և գիտության նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 1.88%-ը կամ թվով 5 տեղեկատվական հարցում հասցեագրվել են կրթության և գիտության նախարարությանը, որոնց բոլորին ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը ժամանակին է պատասխանել:

- ժամանակին- 5

- ուշացված-0
- չպատասխանված- 0

**Արտաքին գործերի նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից ընդամենը 1.1%-ն է հասցեագրվել են արտաքին գործերի նախարարություն, բոլորին ժամանակին է պատասխանվել:

- ժամանակին- 3
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**Բնապահպանության նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 1,4-%-ն ուղղված են եղել բնապահպանության նախարարություն: Հետաքրքրական է այն փաստը, որ բոլոր հարցումները հասցեագրվել են ՀՀ բնապահպանության նախարարությանը և նախարարությունը հարցումների 50%-ին պատասխանել է ժամանակին, 50%-ին պատասխանել է ուշացումով: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր 6-ում:




Պատկեր 6

- ժամանակին- 2
- ուշացված-2
- չպատասխանված- 0

**Մշակույթի և սպորտի բնագավառ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից միայն մեկն է հասցեագրվել ՀՀ մշակույթի նախարարությանը, որը ժամանակին է պատասխանվել: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ևս ժամանակին է պատասխանել իրեն ուղղված միակ հարցմանը:

- ժամանակին- 2
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**Տրանսպորտի և կապի նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանն է հասցեագրվել միայն 1

հարցում, որին նախարարությունը ժամանակին է պատասխանել:

- ժամանակին- 1
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**Քաղաքաշինության նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 1.1%ը՝ 3 հարցում հասցեագրվել են ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, որն էլ ժամանակին պատասխանել է բոլոր 3 հարցումներին:

- ժամանակին- 3
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**ՀՀ տարածքային կառավարման նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականի ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը հասցեագրվել է միայն 1 հարցում, որը ժամանակին է պատասխան ստացել:

- ժամանակին- 1
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 1,5%ը՝ 4 հարցում, հասցեագրվել է ՀՀ ֆինանսների նախարարություն, որը ժամանակին պատասխանել է բոլոր 4 հարցումներին:

- ժամանակին- 4
- ուշացված-0
- չպատասխանված- 0

**ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 4.1%ը հասցեագրվել են դատախազություններին: Դատախազություններին ուղարկված հարցումների գրեթե 50%-ը հասցեագրված են եղել ՀՀ գլխավոր դատախազություն, մյուսները՝ ՀՀ զինվորական դատախազություններ են: Ստացված պատասխանների պատկերը տես՝ Պատկեր7-ում:




Պատկեր 7

- ժամանակին- 7
- ուշացված-3
- չպատասխանված -1

**ՀՀ Հատուկ քննչական ծառայություն**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 3%-ը՝ թվով 8 հարցում, կազմել են հատուկ քննչական ծառայություններ ուղարկված հարցումները: Ուշագրավ է, որ ուղարկված 8 հարցումներից 8-ին պատասխանները տրվել են ժամանակին:

- ժամանակին- 8
- ուշացված-0
- չպատասխանված -0
- Պետական այլ մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2014 թվականին ուղարկված 265 տեղեկատվության հարցումներից 2 տեղեկատվական հարցում հասցեագրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, որոնց պատասխանվել է ժամանակին և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որը պատասխանվել է ժամանակին:

# Ամփոփում

Այսպիսով՝ 2014 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ընդհանուր թվով 265 տեղեկատվության հարցումներ է ուղարկել պետական կառույցներին և ՏԻՄ-երին: Նշված հարցումների 203-ին կամ ընդհանուր հարցումների 77%-ին պետական և ՏԻՄ մարմինները պատասխանել են ժամանակին, 55-ին կամ 21%-ին՝ պատասխանել են ուշացած և 7-ին կամ 3%-ին՝ պատասխան չի տրվել: Սույն քանակական ցուցանիշներ փաստում են, որ պետական մարմինները հիմնականում ժամանակին են պատասխանում ուղարկված հարցումներին: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր 5 հարցումներից մեկին ուշ է պատասխանվում:

Այսպիսով, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված հարցումներին պատասխաններից ելնելով կարելի է եզրակացնել, որ պետական կառույցների և ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվեցիայի 10-րդ հոդվածի դրույթները մասամբ են պահպանվել:

Ըստ այդմ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առանձնացնում է ամենաբարեխիղճ և ոչ բարեխիղճ պատասխանող կառույցներին:

Հարցումներին ամենաբարեխիղճը պատասխանել է ՀՀ ոստիկանությունը և նրա ստորաբաժանումները՝ 43 հարցումներից միայն 9-ն է եղել ուշացված: Անբարեխիղճ պատասխանող կառույցներից առանձնանում է ՀՀ Պաշտպանության նախարարությունը՝ 19 հարցումներից միայն 2-ին պատասխանելով ժամանակին, 15-ին պատասխանելով ուշացումով, և 2 հարցման նախարարության կողմից պատասխան չի տրվել:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.

**ՀՔԱՎ կողմից 2014թ-ին իրականացրած տեղեկատվական հարցումների պատասխանների**

**ամբողջական ցանկ**

| | Հասցեատեր | Գրությունների քանակ | Ժամանակին | Ուշացված Պատասխան չկա |
|---|---|---|---|---|
| **Արդարադատության բնագավառ** | | | | |
| 1. | ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ | 4 | 3 | 1 /5օր/ |
| 2. | ՀՀ ԱՆ Վարդաշեն ՔԿՀ | 3 | 2 | 1 /15 օր/ |
| 3. | ՀՀ ԱՆ Կոշ ՔԿՀ | 3 | 3 | |
| 4. | ՀՀ ԱՆ Աբովյան ՔԿՀ | 2 | 2 | |
| 5. | ՀՀ ԱՆ Արթիկ ՔԿՀ | 5 | 5 | |
| 6. | ՀՀ ԱՆ Գորիս ՔԿՀ | 2 | 2 | |
| 7. | ՀՀ ԱՆ Երևան-Կենտրոն ՔԿՀ | 2 | 2 | |
| 8. | ՀՀ ԱՆ Հրազդան ՔԿՀ | 4 | 4 | |
| 9. | ՀՀ ԱՆ Սևան ՔԿՀ | 4 | 3 | 1 /8 օր/ |
| 10. | ՀՀ ԱՆ Վանաձոր ՔԿՀ | 5 | 5 | |
| 11. | ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն | 9 | 7 | 1 /4օր/<br>**1 հարցման պատասխան չի տրվել** |
| 12. | ՀՀ արդարադատության նախարարության քրեակա տարողական ծառայություն | 1 | 1 | |
| 13. | ՀՀ արդարադատության նախարարություն | 13 | 9 | 4 ուշացված հարցման պատասխան 4 օր, 5 օր, 5 օր, 3 օր |
| 14. | ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության | 2 | 1 | 1 հարցման պատասխան 10 օր ուցաշումով |
| 15. | ՀՀ արդարադատության ակադեմիա | 1 | 1 | |
| 16. | ՀՀ դատական դեպարտամենտ | 5 | 4 | 1 հարցում 3 օր ուշացումով |
| 17. | ՀՀ Տաշիրի նոտարական գրասենյակ | 1 | | 1 հարցում 2 օր ուշացումով |
| | **Ընդ** | **66** | **54** | **11**<br>**1 պատասխան չկա** |
| **ՀՀ ոստիկանության ծառայություն և նրա ստորաբաժանումներ** | | | | |
| 18. | ՀՀ ոստիկանություն | 22 | 19 | *1 հարցում 3 օր*<br>*1 հարցում* 4 օր<br>*1 հարցում* 5 օր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19. | ՀՀ ճանապարհային ոստիկանություն | 5 | 1 | *1 հարցում* 4 օր ուշացումով<br>*1 հարցում* 4 օր ուշացումով<br>*1 հարցում* 5 օր ուշացումով<br>*1 հարցում* 5 օր ուշացումով |
| 20. | ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն | 2 | 2 | |
| 21. | ՀՀ Ոստիկանության Գյումրի քաղաքի ոստիկանության Մուշի բաժին | 1 | | *1 հարցում*<br>5 օր ուշացումով |
| 22. | ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն | 1 | | *1 հարցում*<br>3 օր ուշացումով |
| 23. | ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն | 2 | 2 | |
| 24. | ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին | 1 | 1 | |
| 25. | ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին | 1 | 1 | |
| 26. | ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն | 1 | 1 | |
| 27. | ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժին | 1 | 1 | |
| 28. | ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին | 1 | 1 | |
| 29. | ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին | 1 | 1 | |
| 30. | ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արմավիր մարզի քննչական բաժին | 1 | 1 | |
| 31. | ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին | 1 | 1 | |
| 32. | ՀՀ ոստիկանության քննական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժին | 1 | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33. | ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոնական քննչական բաժին | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **43** | **34** | **9** |
| **Տեղական ինքնակառավարման մարմիններ** | | | | |
| 34. | Տաշիրի քաղաքապետարան | 1 | 1 | |
| 35. | Ալավերդու քաղաքապետարան | 1 | 1 | |
| 36. | Երևանի քաղաքապետարան | 6 | 6 | |
| 37. | Վանաձորի քաղաքապետարան | 13 | 13 | |
| 38. | Սպիտակի քաղաքապետարան | 1 | 1 | |
| 39. | Ստեփանավանի քաղաքապետարան | 1 | 1 | |
| 40. | Արջուտի Գյուղապետարան | 1 | | **1 հարցման չի պատասխանվել** |
| 41. | Մեծավան գյուղի գյուղապետարան | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **25** | **24** | **1 պատասխան չկա** |
| **Սոցիալական և առողջապահական բնագավառ** | | | | |
| 42. | Սևանի հոգեբուժական հիվանդանոց | 2 | 2 | |
| 43. | Նորք հոգեբուժական կենտրոն | 1 | 1 | |
| 44. | ՀՀ ԱՆ Հոգեբուժական բժշկական կենտրոն ՓԲԸ | 1 | | 1 հարցման պատասխանվել է 10 օր ուշացումով |
| 45. | Ավան հոգեկան առողջության կենտրոն | 1 | 1 | |
| 46. | ՀՀ ԱՆ հոգեբուժական բժշկական կենտրոն ՓԲԸ-ի Ավանի նարկոլոգիական կլինիկա | 1 | | 1 հարցման պատասխանվել է 5օր ուշացումով |
| 47. | Սյունիքի մարզի նյարդահոգեբուժական դիսպանսեր | 4 | 3 | 1 հարցման պատասխանվել է 4 օր ուշացված |
| 48. | Գյումրու հոգեկան առողջության կենտրոն | 6 | 6 | |
| 49. | Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր | 14 | 10 | 4 հարցման պատասխանվել է 5օր, 3 օր, 6օր, 7 օր |
| 50. | <Նուբարաշեն> հոգեբուժական կլինիկա | 2 | 1 | 1հարցման պատասխանվել է 8 օր ուշացումով |
| 51. | Երեբունի բժշկական կենտրոն | 1 | 1 | |
| 52. | Արաբկիր բժշկական համալիր | 2 | 2 | |
| 53. | Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր | 1 | | 1 հարցում 4 օր ուշացումով |
| 54. | Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն | 1 | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 55. | Վաղարշապատի հիվանդանոցի | 1 | 1 | |
| 56. | ՀՀ ԱՆ նարկոլոգիական հանրապետական կենտրոն | 2 | 1 | **1 հարցում մնացել է անպատասխան** |
| 57. | Նևրոզների կլինիկա | 1 | 1 | |
| 58. | Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ | 1 | 1 | |
| 59. | ՀՀ առողջապահության նախարարություն | 11 | 8 | 3 ուշացված հարցման պատասխան 5 օր, 10 օր, 4 օր |
| 60. | ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն | 1 | 1 | |
| 61. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 7 | 4 | 3 ուշացված հարցման պատասխան, /3 օր, 7օր, 7օր / |
| 62. | Վանաձորի տարեցների տուն[2] | 1 | | **1 հարցում մնացել է անպատասխան** |
| 63. | Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ | 1 | 1 | |
| 64. | Նորքի տուն ինտերնատ | 1 | 1 | |
| 65. | Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ | 2 | 2 | |
| 66. | Գյումրու տուն ինտերնատ | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **67** | **50** | **17**<br>**2 հարցման պատասխան չի եղել** |
| | **Պաշտպանության նախարարություն** | | | |
| 67. | ՀՀ պաշտպանության նախարարություն | 19 | 2 | 15 ուշացված հարցման պատասխան<br>15 օր, 17 օր, 12 օր, 20 օր, 8 օր, 17 օր, 12 օր, 12 օր, 13 օր, 23 օր<br>2 հարցման վերաբերևյալ պատասխան չի ստացվել |
| | **Ընդ.** | **19** | **2** | **15**<br>**2 հարցման պատասխան չի եղել** |
| | **Կրթության և գիտության նախարարություն** | | | |
| 68. | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 5 | 5 | |
| | **Արտաքին գործերի նախարարություն** | | | |
| 69. | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 3 | 3 | |
| | **Բանպահպանության նախարարություն** | | | |
| 70. | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4 | 2 | 2 ուշացված հարցման պատասխան 10 օր, 6 օր |

[2] *Վանաձորի տարեցների տանն ուղղված գրավոր հարցմանը տրվել է բանավոր պատասխան, սակայն ելնելով տեղեկանքի պատրաստման մեթոդաբանությունից, այս հարցումը հաշվարկվում է՝ որպես անպատասխան*

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մշակույթի և սպորտի բնագավառ** | | | | |
| 71. | ՀՀ մշակույթի նախարարություն | 1 | 1 | |
| 72. | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **2** | **2** | |
| **Տրանսպորտի և կապի նախարարություն** | | | | |
| 73. | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 1 | 1 | |
| **Քաղաքաշինության նախարարություն** | | | | |
| 74. | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 3 | 3 | |
| **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն** | | | | |
| 75. | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 1 | 1 | |
| **ՀՀ ֆինանսների նախարարություն** | | | | |
| 76. | ՀՀ ֆինանսների նախարարություն | 4 | 4 | |
| **ՀՀ դատախազություններ** | | | | |
| 77. | ՀՀ գլխավոր դատախազություն | 6 | 3 | 2 հարցում, 5 օր<br>7 օր ուշացումով<br>**1հարցում մնացել է անպատասխան** |
| 78. | ՀՀ զինվորական դատախազություն | 3 | 2 | 1 հարցում<br>10 օր ուշացումով |
| 79. | ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազություն | 1 | 1 | |
| 80. | Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **11** | **7** | **3**<br>**1 գրություն մնացել է անպատասխան** |
| **ՀՀ Հատուկ քննչական ծառայություն** | | | | |
| 81. | ՀՀ հատուկ քննչական ծառայություն | 6 | 6 | |
| 82. | ՀՀ քննչական գլխավոր վարչություն | 1 | 1 | |
| 83. | ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչություն | 1 | 1 | |
| | **Ընդ.** | **8** | **8** | |
| **Այլ կառույցներ** | | | | |
| 84. | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ | 2 | 2 | |
| 85. | ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով | 1 | 1 | |